Պէտք է երբէք փոքրոգի լինել։ Բրիտանոսի գործի յաջողութիւնը նրա համար աշխատող մշակի բարոյական ուժի մէջ է։ Այդտեղ հոգու արիութիւն է պէտք, ջերմ սէր դէպի թշուառ եղբայրները, խոր հաւատ ու հաստատուն հաւատ, որ լոյսը պիտի յաղթի խաւարին, որ արդարութիւնը պիտի յաղթի անիրաւութեան։ Ցոյց տուր աւելի հաւատ դէպի բարու յաղթանակը, աւելի արիութիւն արդար գործի կռուի մէջ, աւելի քաջութիւն չարի յարձակումների ու ոտնձգութիւնների դէմ։

Մամբրէ վարդապետ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Դեկտեմբերի երկուսին Աղգիս Վեհափառ Հայրապետը նեղուելով ոտքի հիւանդութիւնից, օդափոխութեան նպատակաւ ուղևորուեց Աղէքսանդրապոլ այնտեղից Թիֆլիզ գնալու մտադրութեամբ։ Մայր Աթոռից մինչև Էջմիածին կայարանը Նորին Սրբութեան ուղեկցում էին լուսաբարեալ Դևոնդ եպիսկոպոսը, Վանական կառավարութեան նախագահ Եղիշէ ծ. վարդապետ Մուրադեանը և Սինոդի անդամ Մատթէոս վարդապետ Մատթէոսեանը. իսկ մինչև Աղէքսանդրապոլ՝—Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը և պ. Թորէն Խրիմեանը։

Որովհետև Զուարթնոց եկեղեցու աւերակների շրջակայքում դտնուեցին զանազան շինութիւնների բաղմաթիւ յետքեր, ուստի Մայր Աթոռիս միաբան տէր Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանը դիմեց Կայսերական Հնագիտական Ընկերութեան օրինաւոր թոյլտուութիւն ստանալու յիշեալ տեղում պեղումներ կատարելու։ Թոյլտու-

թիւնն արդէն ստացուած է և նպաստաւոր եղանակներ լինելուն պէս՝ սկսուելու են ընդարձակ պեղումներ, որոնք անշուշտ չափազանց հետաքրքիր պէտք է լինին՝ բանալով մեր առաջ դարերի ընթացքում հողի տակ թաղուած բաղմաթիւ յիշատակարաններ։

Դեկտեմբերի 4-ին ս. ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին Վեհափառ Հայրապետի հրամանով ս. Գայանէի վանքում աբեղայ ձեռնադրուեցին Ներսէս սարկաւագ Տէր Միքայէլեանը և փիլիսոփայութեան դոքտոր և Աստուածաբանութեան լիցէնցեատ Երուանդ սարկաւագ Տէր Մինասեանը։

Մայր Աթոռս վերադարձաւ Կարսի վիճակի փոխանորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը, որը թողեց յիշեալ վիճակի փոխանորդութիւնը։

Տ. Արտակ վարդապետը նշանակուեց Նոր-Բայազիդի գործակալ։

ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱՒՈՍԼԱՒ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԱՑ

«Церк. Вѣстник»-ի 44 համարում կարդում ենք.

Վերջին ժամանակներս ոչ միայն աշխարհական մամուլը, այլև մեր թեմական լրագիրները բաւականին տոկուն և միաբան քննում են այն երևոյթը, որ մեր հոգևոր դպրոցների սաների մէջ հետզհետէ թուլանում է հովուական պաշտօնավարութեան վերաբերեալ դաղափարական ոգևորութիւնն ու սէրը։